ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 65-Լ

«02» 08 2023 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 56-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության ստեղծումը և դրանով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազների և դատախազների որոշ գործառույթների փոխանցումը հիշյալ վարչությանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների, գլխավոր դատախազության ավագ դատախազների և դատախազների միջև աշխատանքի բաժանում կատարելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 44 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2023 թվականի հունիսի 19-ի N 56-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետի 1-ին ենթակետի գ. պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ

հանձնարարություններով վարչության, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազների և դատախազների, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականների և օգնականների աշխատանքները,»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հրամանի 1-ին կետի 8-9-րդ ենթակետերը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ